

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԸՆՅՊԸՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԵՅԵՍԽԵՆՈՒՄԸ.

Գ. Շ. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ ՀԱՅԱԽ.

1842 ԹԻՒ. 12 ՕԳՈՍՏՈՍԻ.

ՄԱՂԱՐԹՈՒ ՆԱԽԱՎԱԿԱՅԻ ՎԱՆՔՈՒՄԸ.

(Յ-Ռ-Ռ-Ն-Ի-Ռ-Ի-Ն-)

Ըատ ժամանակ չքաշեց, շարունակեց միայնակեացը, հայրս քանի մի հազար ձիաւորի զլուխ լինելով, Քեարիմ խանի մահուանից յետը նորա որդւոց, զօրավարաց և թոռանց կողմը հաստատ պահելով, որ ըստ օրէ երեելի ոմն եղաւ, և բաց ի հօրիցը մնացածէն՝ շատ հարատութիւն ևս ժողովեց էն կոխւների մէջը, երբ միւսները ինչ ունեին չունեին՝ կորցնում էին:

Վաեցի, էն ժամանակը իւրաքանչիւր ժողովրդապետ, տիրապետող և երեելի զօրավար կամ քաղաքապետ զիշեր ցերեկ էր անում ինքնազլուխ իշխել, ամենի սրտիցն էլ շահութիւն և թագաւորութիւն էր անցինում, վասն որոյ բոլոր պարսկաստունը մեծ խառնակութեան, շփոթութեան և երեմանց մէջն էր: Ոչ ոքի խօսքին, խոստմանցը և հաւատարմութեանը չեր կարելի հաւատ ընծայել: Գլխատելը, մարդասպանութիւնը, երգմնազանցութիւնը, աչք հանելը, որդեսպանութիւնը անգամ հասարակական պատիմներ էին: Վկանջներնիս սովորած էին ամենայն օր լսել արիւահեղ պատերազմների համբաւներ, մէկզմէկու կոտորել, միմեանց վրայ յառ-

նել, քաղաքաց աւերումն, գերութիւն, ասպատակութիւն են, են:

Են ևս էս զառն ժամանակումն քամարախտութեամբ՝ նոր ի նոր սկսել էի աշխարհիս համը հոտը առնելը, ինձ մարդկանց կարգումը դասել, նոցա մէջը խառնրվել և պատերազմական լուրերը հետաքրքրութեամբ լսել: Առազում էի երբ կլինի արդեօք՝ որ ես ևս ականատես լինեմ լսուած անցքերին և կամ ներգործող էն արիւնահեղ պատերազմներին: Եհա այս տենչն էր, որ ստիպում էր ինձ ամենայն օր հրացան ձգել, ձի նստել, թուր, հրացան խաղացնել, ըստ որում հայրս տանը չեր, և մօրս էլ աւելի չեի հնազանդում, վասն որոյ ծառայքը ինձ էին ստորադրուած, ինչ ցանկանում էի պարտ էին կատարել, և վաց էր եկած նորան՝ որ համարձակուէր ինձ հակառակ խօսել: Վայրս շատ անդամ քաղցր խօսքերով կիսրատէր և երբէք չեր զայրանայ: Հիմի մտածում եմ որդի, ասեց միայնակեացը, որ մայրս թերես վախում էր իմ խիստ վարքիցս, չլինի թէ զնայի մատնէի մեր ընտանեաց քրիստոնէութիւնը: Էսպէս էնպէս, և ինչ որ ցերեկը կը սեղ կարծել, որ ինձ նման մնունդ առած, ըզգուշութեամբ տանը պահած և էն էլ քըրիստոնէական բարոյականութեամբ, ժամանակաւ պէտք էր հաւատս ուրանայի և երիտասարդութիւնս ցոփութեամբ և շուայտութմանմբ որպէս երեելի բարբարոս պարսիկ՝ անցկացնէի:

Միայնակեացը էս վերջին բառերը շատ ազդողական կրիւք բերանիցն հանեց, ու-

զլուխը քաշ ձգեց մնաց հարուստ ժամանակ լոիկ մնջիկ: Եպա շարունակեց, բաւական էր . . . որդի, բաւական էր, որքան պատմեցի քեզ էն անցածները, որոնք ինձ մեծ ցաւ և խղճահարութիւն բերեցին ակարութիւնս էլ չէ ներում ինձ շարունակել տես էնպէս տաքացայ, որ մոռացայ թէ հիւրս չէ կարող ինձ մօտ ընդունելութիւն գանել, և անց է կէսօրը, ի հարկէ քաղցած կլնիս և վանականք քեզ սպասում կլնին . . . Տէր ընդ քեզ . . . զնաժամանակ է:

Ա երկացայ, մնաս բարով ասելով՝ դուքս եկի քարանցաւէն, փոքր ինչ հեռացայ՝ պատահեցայ մին քերցի, որոյ ստուերի տակին նստեցայ, մատիտս հանեցի, միայնակացի պատմածների երեկէ առարկայքը նշանակեցի փոքր թղթի վրայ — որ ըզդուշութեամբ վերէի առած հետո — որպէս զի չմոռանամ: Քանի մի րոպէ անցաւ, և ահա մին քաղցը եղանակ՝ սրնդի շուրի ձայն ընկաւ ականջս: Ուշի ուշով ականջդրի, որ միայնակեցի քարանցաւէն էր զալս և եղանակն էր Աշխարհ ամենայնի: Առաջին անգամն էր լսելս մեր եկեղեցական երգերն էսպէս, ճշմարիտ շատ լաւ էր և ախորժ լսելեաց: Ենքան սպասեցի մինչեւ նա վերջացրեց, և ապա ճանապարհս շարունակեցի: Աէսօրէն երկու ժամ անց էր, հասայ Մենաստունը, ուր փոքր ինչ ձաշեցի, և ահա վանահայրը և Պօղոս վարդապետը եկին և երբ իմացան միայնակեցի ընդունելն և պատմելն ինձ իւր անցից ըսկիզը, շատ ուրախացան: Մինչև կէս զիշեր համարեա մեր խօսակցութեանց առարկայն միայնակացն էր:

Առաւետեան ամսոյ 25 - ին ախմթումուխին դուքս եկի վանքիցը երեկուան նման վռազ վռազ գնալով, հասայ քարայրի դուռը, ներս մաի, և ահա միայնակեացն էլի նստած Աաղմոսը ձեռքին կարգում էր: Բարեւ տուի, առանց նրա համեցէք անելոյ՝ նատեցայ երեկուան տեղը ու մին փոքրիկ կապոց զրի առջևն: Էս ի՞նչ է, հարցըց: Ձեր հայրութեան համար փոքր ինչ ընծայ եմ բերած, պատասխանեցի: Աիսածիծաղ բաց արեց, մին մին նայելով՝ տեսաւ, որ մին զոյգ բրթէ ձեռնաման, մին որսորդի մեծ զանակ, երկու կապոյտ գոյն թաշկինակ և երկու զոյգ բրթէ երկար գուլպայ են: Բանի մի անգամ էս կողմը էն կողմը շուռ - մուռ տալով ապուշ ապուշ նայելով, վեր առաւ, որդի, ուղում ես կրկին հաղորդել տաս ինձ աշխարհիս զեղսութեանը, չէ շնորհակալ եմ, ես չեմ ընդունելոյ: Էստունք ասեց և ձեռքերը հեռացրաւ:

Ո՞չ, պատասխանեցի, ո՞չ՝ հայր սուրբ, իմ միտքս երբէք չար կողմը չէ քեզ համար, քառ մի՛ լիցի, — սոքա էնպէս բաներ են, որ ձմեռը առաջներնուս է, և քեզ հարկաւոր կպան:

Միթէ առանց սոցա չկարողացայ ևս այնքան տարիներ, այնքան ձմեռներ անցկացնել էս սարերի գլխին:

Վնցկացրիր էն ժամանակը՝ հայր սուրբ, երբ երիտասարդ էիր, բայց այսուհետեւ . . . :

Սատուծով, վեր առաւ նա, — Սատուծով էլի կարող եմ անց կացնել:

Ես չուզելով շատ ստիպել նորան, թողի էս ու ուրիշ առարկայի զիմեցի: Ե՞հ, հայր սուրբ, ասեցի, էսպէս բաները ոչինչ.

են, էլի լաւ է՝ որ ժամանակներնիս անց-
կացնենք մին խօսակցութեան վրայ, որ
արժումն ունենայ. խնդրեմ շարունակես
երեկուան կիսատ պատմութիւնը, որ ինձ
շատ ախորժելի թուեց:

Հաւ, լաւ . . . պատասխանեց, հա՞
• . . հա՞ սկսենք շատ և վաազում, —
ինչ ասեմ, քոյ դիւթիւն խօսքերովն ինձ
համոզեցիր ասել տալը . . . սկսել եմ.
• . . էլ ճար չկայ՝ պէտք է շարունակեմ:
Է՞՞ որդեակ, յաւելացրեց — է՞՞ որդ-
եակ, երեկն ինչ որ պատմեցի վեր ի վայր,
կամ լսած էի կամ երեխայութեանս ժամա-
նակը ականատես եղած. — զիտես երեխայա-
կան յիշողութիւնը որքան և սուր լինի,
դարձեալ շատ պականութիւններ կունենայ
— բայց . . . այսուհետեւ ինչ որ պատմե-
լոց եմ՝ կարող և լաւ մտառութեամբ ա-
կանջ դնել և հաւատալ որպէս հայելումն
աշացս առջեն նկարազրուած են մինչեւ
ցայսօր էն ամենը:

Հազիւ թէ, վերակրկնեց միայնակեացը,
— հազիւ թէ 16 կամ 17 տարեկան կի-
նելի երբ Զաքի խանի սպանուիլը լսանք: Վանի մի օր անցաւ շանցաւ, հօրս սպա-
նուելոյ և նորա ծիաւորների Շուլտարի
մէջը ցրուելոյ բօթն էլ մեզ հասաւ: Ոօրս
շատ զգալի էր՝ հօրս առանց քահանայի
և եկեղեցական խորհրդեանը թաղումը: Տարը
թուման*) պարզեւեց մին հայի և
քսան թուման մին քահանայի, որ զնան
Շուլտար, էն տեղ քառասուն օր ծած-
կարար զիշերները զերեզմանի վրայ աղօթք
անեն, Աազմոս կարգան, և քառասուն

աղքատաց՝ ինչ ազգէ որ լինին՝ եօթն օր
հաց տան: Ես կերպ վարձքերը — որ մօրս
մտօքը ընդունելի պէտք էին լինել Աստո-
ծոյ Եմուսի առաջին — ինձ շատ ծիծաղե-
լի էին երեսւմ: Տե՛ս որքան անզգայ սիրո
ունեի, և վատ նշանները իմ՝ ապագայ
կնաց համար, էն օրերիցը սկսած էին
արմատ ձգել սրտումն, վասն որոյ և ժա-
մանակաւ հաւատու ուրացայ: Մայրս մին
քանի օրից յետոյ՝ ինձ ևս երդմամբ և ա-
նէծքով՝ թէ չկատարեմ, պարտաւորեց,
երբ և լինի, ժամանակաւ Շուլտար պա-
տահական գնալս, մօտիկ Նայերի զեղերիցը
քահանայ բերել տամ, և էն քրիստոնէա-
կան խորհրդաները կատարել տամ: Ինձ
• . . ինձ որդի, մօրս ասածները և պար-
տաւորելը ծիծաղական բաներ էին երեսւմ: Միայնակեցի աչքերը էստունք խօսելիս
լցուեցան արտասունքով, փոքր ինչ համ-
բերեց, և ապա շարունակեց: Նիմի ևս
հասկանում, որ հասակիս բերմունքը և
անզուսպ կիրքն էին՝ որք ստիպում էին
ինձ արտաքուստ տրտմութիւն ցոյց տալ,
և ներքուստ անզգայ մնալ, և թերեւս ու-
րախանալ հօրս մահուան վրայ: Մտա-
ծում էի, ինքնազլուխ մնացի այսուհետեւ,
միամօր որզի, որ ամենայն տան իշխանու-
թիւնը և կառավարութիւնը հազիւ ըստ
ամենայնի ձեռքս ընկան, ինչ ուզեմ՝ կա-
րող եմ անել և ոչ ոք էլ չի համարձա-
կուիլ արգելառիթ լինի, ոչ ոքից էլ վախ՝
աչ չի պէտք է տնենամ, երբ լինի էս
սպոյ օրերը մին անց կնայ, որ ևս էլ ան-
սանձ ուր ուզեմ գնալմ, ինչ կամենամ՝
անեմ: Կարծում էի, հօրս առախճանը
ինձ կտան առանց իրիք արգելման. — բայց
ով, ով զօրազլուխը, ով իշխողը, ով թա-

(*) Թաւմանն էր մին Հոլանտիոյ ոսկւ յ ել ք
քառարդուն:

դաւորը պիտեր տար, — երբէք մոռէս ևս
չէր անցկենում՝ թէ, Պարսկաստանը այժմ
հարխւրաւոր տէրեր ունի: Որքան գիտում
էր, այնքան պարսկաստանը խառնվում էր
և շփոթվում: Գիշերները Շիրազ տանը
քնելը ունեւորի համար առանց զգուշու-
թեան երկիւղ էր, բայց ևս մրափած երե-
ւակայած ապագայ փառաց յուտով՝ թրծ-
րած կայի: Կարաւանները վաճառականոց
երթեւեկութիւնները ի վազուց հետէ, զա-
դարած էին: Եմենայն տեղ թանգութիւնը
ու սովոր էր թագաւորում: Որպէս Շիրա-
զու՝ նոյնալէս ևս միւս քաղաքների բնակիչ-
քը երկու ջրի մէջ էին մնացած, չէին ի-
մանում՝ որ բոնաւորի կողմնակից լինին
կամ որի՞ն հնազանդուին: Ուէ մինին
ընդունում էին, յանկարծ միւսը զօրանա-
լով՝ անհամար զօրքով զալիս էր նրան
գուրս անում ու ինքը ափրազեատում ու
ընակացը տուժում: Վի տարուց աւելի
հօրս մահուանից յետը մնացի տանը պա-
րապ — սարապ, միշտ խօսքս էն էր մօրս,
թէ առւր ինձ զօրական ըլնեմ, ապա թէ
ոչ՝ առանց քոյ հրամանին կիսախչիմ,
կերթամ՝ մին զօրավարի կյայտնեմ՝ ով
լինելս և նրան ծառայութիւն անելոյ կամ,
քըս: Վայրս տեսնելով ինձ չէ կարողա-
նում համոզել, զսպել, փասն որոյ համա-
ձայնեց և խոստացաւ կատարէ իմ՝ կամքը՝
միայն թէ համբերեմ, մինչև մտածենք
տեսնենք մըն է ամենից վերայ տիրապե-
տում, նրան խնդրէ, նրան յանձնէ, ինձ:
Նրա համաձայնութեան մէծ պատճառն
էլ էն էր, որ տեսնում էր, որ ըստ օրէ
կարողութիւններնիս ձեռներնուցս գնում
էր, ով վեր էր կենում, ով զալիս զօր-
քով Շիրազ մտնում, նրանց, որք տէ-

րութեան ծառայողք չէին, տուժում էր,
ուժով փող, ձի, զրահ, մինչև տներիցը
ուաելիք, ինչ ունեին չունեին՝ առնում
էր և խում, վասն որոյ ինձ ուզում էր
տալ մինին, որպէս զի մին պաշտօն ունի-
նալով կարողանայի մեր կայքը պահպա-
նել:

Ես ջրերումը Սազդ խանը Շիրազ ե-
կաւ եղքօր որդույն Երուլֆաթ խանին
կալանաւորելով և կուրացուցանելով բրո-
նացաւ: Վայրս էլ չկարողացաւ հօրս
մահուան վերայ և մանաւանդ իմ ան-
զուսպ լինելոյ ցաւը տանել, հիւանդացաւ՝
քանի մի ամիս քաշեց մեռաւ, երբ և սա
մնացի մինակ, նկքնազրուխ և անտերունչ:
Երկար ժամանակ չքաշեց, շատ ժամա-
նակից մեր տանը մնացած փորձած ծա-
ռայքը, իմ՝ թեթեւամիտ երիտասարդու-
թիւնէս և անսանձ ցոփ կեցութիւնէս յու-
սահատուած՝ ցրուեցան զուրս գնացին:
Ես ևս այնուհետեւ բարեկամս և թշնամիս
շճանաչելով, ումին պատահում էի՝ ա-
մենի հետ էլ միակերպ էի վարփում: Վաստ
մարդիկ շուտով կարողացան ինձ զտնել
և ընկերակից լինել: Քնական ևս անփորձ
և թեթեւամիտ, նոքա ևս աւելի պատճառ
եղան բարքս ու բարոյականութիւնս եղ-
ծանելոյ ու զլիսէ հանելոյ, աւերքիլ մոլու-
թեամբ: Պարսից կեղծաւորութիւնը, խո-
րսամանկութիւնը, ստախօսութիւնը, որ-
տերդմնազանցութիւնը, որք իսկզբանէ ա-
մալի էին ինձ, օր ըստ օրէ ընտելացան
ինձ և ապաւորեցան ընութեանս մէջը:
Փոքր փաքր ունեցած չունեցածս վատնեցի,
զրաւ զրի, հետպհետէ վաճառեցի, պար-
սատերներուս տուի և մնացեալը անպի-
տան ընկերներիս հետը վայելիցի: Երբ

միտքս կդայ արածներս, կդողամ՝ կսարսափիմ թէ ԲՇնչպէս Էնովիսի առաքինութեամբ մ.ձացած երեխայս՝ Էնպէս վատ աստիճանի հասայ: Արբեք չեի մտածում թէ այն հարսառութիւնը կհասնի: Ը իրազ որ Սոխ զեղխութեան վարժառունն էր, ինձ նման երիտասարդներին շատ էր լացացրել: Օ օրաց մ.ջը ծառայութեան սերը, որ մօրս կենդանութեան ժամանակը արձարձվում էր սրտումն, զեղխութիւնը հանգցրած էր:

Արբ ունեցած չունեցածս ամենը ձեռնիցս զնաց, ու ել ոչինչս մնաց, ընկերներս ել ինձ դատարկ տեսնելով հեռացան ինձանէ, ևս նոր ի նորոյ սթափեցայ: Փոքր ժամանակ դասարկապորտ քամի կուլ տալով շրջեցի, հենց աղքատութեան ձաշակն առի, կրկն զօրաց մ.ջը մանելոյ սերը արձարձվեցաւ մաքումն. վասն որոյ մին օր ներկայացայ իւրեան Աազդ խանին, յայտնեցի խորհուրդս: Աս, հասակիս, կերպարնելիս խորը նայելով՝ հարցրեց, ով ևս եւ ում որդի ես: Պապիս և հօրս անունը երբ լսաւ, պարսկական ձարտասոնութեամբ զովելով նոցա և նոցա քաջութիւնները ու հաւատարիմ ծառայութիւնները, հրամացեց զօրաց մ.ջը ինձ հարիւրապեսութեան աստիճան տան: Են օրիրը ևս ինձ ամենարազբաւոր անձն էի կարծում աշխարհիս միջին:

Փոքր ժամանակ անցաւ, Օ աքի խանի որդի Վլե Վուրատ խանը եկաւ Ը իրազը պաշարեց մեծ զօրքով: Ի երդումը հացը՝ պաշարելէնը և ամենայն ուտելիքը էնքան սուզացաւ, մինչև շան և կատուի միուր, չոր կաշիքն անդամ՝ պաշարվածները միշանց ձեռքէն խուռմ էին՝ եփում ուտում:

Վանի քանի անդամ՝ արիւնաշեղ կաիւներ եղան . . . ո՞չ, որքան մարդ սովէն, կռուեն կռառվեցան: Հայք էին, Հայք որ զարձեալ . . . զարձեալ էն զառը օրերումը հօրս յիշատակի և անուան համար, ծանկարար ինձ ուտելիքօք օգնում էին: Աս . . . որդեակ, ես . . . երախամնուացս, էստունցով էլի չզգացի նոցա բարերարութիւնները, չզգացի թէ երբեմն ես ել Վրիստոնէութիւն էի արած, չզգացի թէ նոցա ազգակից և եղբայր եմ, պարտաւորութիւնս է նրանց երախտեաց փոխարէնը եթէ լաւութիւն շանիմ, դոնէ վատութիւնս ևս չմտածեմ նոցա համար . . . էնպէս էի կարծում թէ նրանց պարտաւորութիւնն է ինձ պատուել և կերպել: Աս անխղճմնունքս, նրանց ամեն լաւութեանց փոխարէնը մասնեցի նոցա Աազդ խանին, երբ իւր մեծամեծօքը մին օր անց էր կինում ինձ պահ տուած աշտարակովը, ասելով թէ Հայք՝ որք բերդումը պաշարված են, ինչի չեն զինուոր տալիս մեզ և աջակից չեն լինում էսպիսի հարկաւոր ժամանակին: Արանց ել աւելի ապերախտութիւն կլինելը արդիօք աշխարհքում: Վառ լիցի:

Աազդ խանի հրամանաւ բռնութեամբ Հայերիցը ջոկովի յիսուն երիտասարդ որոշեցին, յանձնեցին ինձ և ես խառնեցի իմ ստորագրելոցը: Հայերը շատ ընծայ՝ կաշառք էս կողմը էն կողմը տուին, որ զենուոր չտանի: Ի այց ոչինչ չկարողացան շնել, որովհետեւ հակառակորդն ես էի, ես՝ իւրեանցից ծնուած: Փոխանակ էն յիսուն Հայերին միիթարելոյ և քաջալիքը, ստիպում էի պահք չպահեն, իւրեանց կրօնի վրայ հաստատ չմնան, և

որքան պաշարեղէն միւս հայերն ունեին, սրանց ուժովը բերել էի աալիս բանութեամբ՝ ու բաժանում էն պարափկ զօրականացը, որք ինձ ստորագրեալ էին: Ես ամենայն անիրաւ ծառայութեանցս փոխարենը՝ երկու հարիւր մարդց զլեաւոր երայ և իիլայ ևս ստացայ Աաղղ խանէն: Վաստանջութիւնը մինչև ցայսօր մաշում է ինձ էն անցքի համար, որ մին զիշեր պատահեց. — ևս հարրած՝ սախակցի մի հայերիտասարդինստիլ մեզ հետ ընթրիլ: Ազրումելին չկամեցաւ թէ էս շարաթ պաս է մեզ, մեք մսկղէն չնաք ուտել: Ես չհանդութեալ իմ կարծեցեալ նրա յանդինութեանը և անհնազանդութեանը, — իսկ և իսկ կանգնեցի և դաշոյնով խփեցի սրաի մէջեցը, դիաթաւաւալ վայր ձգեցի: Վահ բարբարոսութեան. — փառք համարելով ինձ ևս ամբարշտութիւնը հրամայեցի դիակը քաշ տալով տանեն ձզնն ողորմելոյն ընկերաց առաջք: Տես որդեակ, ինչպէս կսարսափէին էն հայերը, երբ կը տեսնէին անմեղի արիւնը երկիր թափած և անկինդան դիակին յանկարծ առաջներնուն ձզած արիւնամաթախ: Ի հարկէ Աաղղ խանը ուրախ էր ինձ նման բարբարոս զօրականներ շատ ունենալոյ համար, — բայց Աստուած է, որ իւր ամենասրբար դատաստաննը ամենայն գործոց փոխարենը կհատուցանէ: Վահնի մի օր չանցաւ, ևս և ինձ նման հազարաւոր յանդուղն զննուորականք Աաղղ խանի հետ, ձեռ. — ու տերնիս կապած կաշկանդած գիրի արձանացանք Ակեանդար խանի զօրականաց առաջնն:

Լըտենները լուր էին բերած, թէ Ելի Վուրաս խանը իւր ծանը զօրքովն զնաց

Ասպահանու վրայ, և թէ փոքր զօքք յանձնած է Ակեանդար խանին Ծիրազու պաշարենը շարունակէ, պաշարեալքս էս լսելով միամտացանք ու սկսեցինք անդզուշութեամբ պահպանել մեր տեղերը, մանաւանդ որ Աաղղ խանն էլ հրամայել էր ովք կարող է, ծածուկ պաշարազներիցը, զնայ շրջազայ տեղերիցը պաշար բերէ: Մաքումք դրած էր, որ քանի մի օր պաշարենը շատացնէ ու յանկարծ յարձակուի պաշարոզաց վրայ, ըստ որում պաշարեալները պաշարեղէնի սղութենէն լքուած ու անզօրացած էին: Իսց ըլիկանդար խանը, որ թէպէտ երիտասարդ էր, սակայն աւելի զզոյշ և խելացի զործ տեսաւ քան թէ հինաւուրց կռուարար Աաղղ խանը: Ոին զիշեր, երբ պաշարուողքը միամիտ քնած էին, Ակեանդարը էնպէս յարձակուեցաւ բերդի վրայ, որ ինն ամիս պաշարելուց յետը հազիւ առանց ընդդիմանալոյ աիրեց բերդին: Աաղղ խանը ահիցը մահուան զեղ կերաւ և մեռաւ, բայց նորա որդիքն սպանուեցան, և Վեհրիմ խանի որգուոցը, որոց ձեռքի տակին ինքն ծառայած էր, աչքերը հանել տուաւ: Վարսիկ զօրականացը և քանի մի երեկուեցը՝ ինչպէս զերի՝ բանտարկել տուաւ, որպէս զի Ելի Վուրաս խանին ընծայ քաշէ, և թէ ելմէ նա կամենայ, թող զիսատէ ամենին: Աարող ևս երեակայել թէ էս ձայնը ինչ երկիւղ — ար հաւիրք էին ձզած մեր սիրտը: Են երեկի յաղթող քաջ երիտասարդը, ազդուած վերին տեսչութենէն, հրամայեց հայ զօրականներին, ազատ թողնուել երթալ իւրեանց տները, ասելով թէ ինձ քաջ յայտնի է,

դոքա անպարտ են և բռնութեամբ են ժողովուած էս տեղ :

Ելի Մուրատ խանը երբ լսաւ, Շիրազի առման լուրը, ճանապարհից վերագարձու, առօք փառօք մատա քաղաքը, միւս օրը միտուաչափ մեծամեծաց զլիները հրապարակուամբ կարել և աչքերը հանել տուաւ, ի վերջոյ Խքոպար խան Վհեարիմ խանի որդին իւր բարերարն ես էս պատճիցը ազատ չմնաց : Երեւելի ոմն լինելը են օրերը մեծ վտանգ էր, ամենայն ոք ցանկանում էր զենքը հասարակ մարդկանց զասը շարել : Այսուհետեւ մինչեւ առան օր կալանաւոր զօրազլիներին և զօրականենին քսանով, երեսունով հրամցում էր՝ որ հանեն բանակըն, ցերեկով կամ՝ զիշերով զիսաւտեն ու զիսկերը ձգեն բերդից դուրսր : Էս միջոցին աարակուանաց մեջը արարվում մաշվում էր ամենիս սիրար՝ թէ երբ պէտք է զիսաւվելոց կարզը մեզ հանի : Թէ բանաարիելոցը զոնէ կուշտ հաց էին տուել, էլի էն աշն ու զողը կարող էին անձարութենին կրել — օրը իւրաքանչերիս մին մին լաւաշ էին տալիս, եթէ մին քանի օր ես ուշանար ազատվելներինիս, մաքերնումն զրած էինք՝ միմեանց սպանել և մաերնին ուտել : Վհանի քանի հարիւրաւոր մարդիկ բանափ օդի անմաքրութիւնիցը, մանաւանդ քաղցածութիւնից յառաջ եկած հիւանդութիւններէ մեսսն : Վինչ այս մինչ այն, Ակեանդար խանի միջնորդութեամբ զօրականաց միայն թողութիւն հրատարակուեցաւ, և նոր ի նորոյ սրարտաւորեցանք Ելի Մուրատ խանի զրօշակի տակը մանել և խոստանալ այնուհետեւ հաւատարմութեամբ ծառայել նորան :

Երկու տարուց աւելի էր երբեմն Ելի Մուրատ խանի և երբեմն նրա զօրակարների հրամանի ատակին աստանդական կիանքով էս էն քաղաքի, ամրոցի և բերդերի վրայ պատերազմողների հետն էի զանվում : Երբ Մեհրալի խանի հետը եղած զօրաց մէջը Ծուշապը — Դասփիչ էի, լուր եկաւ թէ Ելի Մուրատն մեծ բանակով՝ Թէհրանից Ասպահան զնալիս, ճանապարհին մեռել է: Վ՞նչ ես կարծում, տան ամիս օր Ծուշապը էի մնացած, իսկի էս միջոցումը մաքիցս անց էր կացած թէ մայրս Բ՞նչ էր կտակել ինձ հօրս զերեղմանի համար: Ասա մին օր միտքս եկան, որ զնամ զոնէ հօրս զերեղմանը տեսնեմ: Վհան լիցի, ընդհակառակն օրերս զինեմութեամբ և զեղսութեամբ անցկացրի: Հարցնես ո՞ր տեղաց էր փողը որ ես կարողանում էի էնակս շոայլութեամբ միտքը: Դուրս կերթայինք ճանապարհների վրայ կապատենք, կարաւանն կամ վաճառկան անց կենալիս, կյափշտակէինք, շատ անզամ էլ յամառվողին կապանենինք, ունեցած չունեցածը կրերէինք կիսադնով կվաճառէինք: Ամեն զօրականքն բարկութեան բաժակ էին եղած պարսկաստանին ոչ ինչ զրիչ՝ ոչ լեզու չէ կարող նկարազել էն ժամանակուան Պարակաստանի վիճակը:

Ծուշապը Դասփիչ բնակիչները՝ որք յուսահատուած էին զօրականաց շարութենեն, հենց լսան Ելի Մուրատի մահն, իսկ և իսկ ոտի վրայ կանգնեցին, սկսեցին էս տեղ էն տեղ՝ ուր որ զտան զօրականներիցը՝ նախ կողոպաել և յետոյ սպանել: Փոքր փոքր ժողովրդի յանդղնութիւնը կամ լու ես ասած, իրաւունքը էն քա-

ջասրտութիւնը ստացաւ, որ ձեռքերնին հասցրին երեկեկացը և զօրավարներին ևս:

Մէք զօրականքս պարտաւորեցանք ցըրուած, թափառուած կողովուած զնալ ժողովիկ Ասպահան, ուր ֆահանի խանը Ազի Մուրատից յետոյ գնացել եր զօրքով մեղել եր քաղաքը ու տիրապետել երազմել եր Ասֆալիեքանց զահի վերայ: Ի հարիէ որպէս մեղ անզուսպ զօրականաց մեղ համեմատ մին զօրավար կամ թագաւոր եր հարկաւոր, նոյնպէս և ֆահանի վասն որոյ և երկու կողմունքն առանց աշխատութեան կարողացան շուտով միանալ :

Էս ֆահանի խանը, որ Վեարիմ խանի եղբայր Աղդ խանի որդին եր, մեծ խոստմունքներով զիսին հաւաքելուց յետոյ, ցրուեց էս — էս կողմն հնազանդեցնել ապստամբներին, այս ինքն իւրեանց անհնազանդներին: Վնդհակառակն անհնազանդներին բռնել, զիսատել. և կամ աչքերնին հանել: Էս խառն ժամանակումը քանի մի հազար զօրքով ուղարկեց ինձ Թաէհրան բերդապահ զօրացն օգնական լինել: Իմ դուրս զալու օրերն եր՝ որ Շըս Ա էիս խանը, որ ամեն զօրավարներիցը քաջասիրտ և լու պատերազմողն եր, եկաւ Ասպահան և հնազանդեցաւ ֆահանի խանին:

Ճանապարհին առենայն անհնազանդ մեծամեծներին պատմելով, ապստամբ ժողովուրդներին ջարզելով՝ նոցա ինչքը կայքը յափշտակելով, առանց ինացիկը իսկական և արտկան ցեղին՝ հասայ Թաէհրան: Առծումը էինք Ասպահանը ֆահանի խանին հնազանդելով և Շըս Ա էիս-

ով ֆահանի դուռը զալով, պարսկաստանը կհնազանդուի, կիսազաղուի: Երգարե երեկելի մին ուրիշ հզօր հակառակորդ էլ չը երեռւմ մին տեղ և ամենայն մեծամեծաց հրովարտակներ էլ որ զրում էր, ոմանց պարզե խոստանալով, ոմանց պատիմ սպառնալով և սրանք էլ որպէս թէ ընդունում էին, բայց ըստ որում պարտկաստումը քանի մի տարի էր՝ օրինաւոր թագաւորի անուն չը լսած, վասն որոյ և ոչ որդին չը կամենում միահեծան տէր ճանաչել: Ուստի մինչ այս մինչ այն՝ ներքինի Աղայ Մամատ խանը, Մագանդարանցի երեկելի Մամագ Նիւօէյին խանի որդին եր, և հօր մահուանից յետը զիսաւոր և ազդապետ էր Վաջար ցեղին, իւր եղբարց, ազդականց և (էլ) ժողովրդի օգնականութեամբը, մեծ զօրքով եկաւ Ասպահան ֆահանի խանի վրայ: Ֆահանի խանը՝ իւր անիրաւութեանց և յափշտակութեանց, մանաւանդ զօրավետաց և զօրաց երկար միջոց ռոճիկ չտալոյ համար՝ միամիտ չըր, որ նոքա իւրեանց համար կոռուին, վասն որոյ մին զիշեր քանի մի հարիւր ճիւաւորով փախաւ Շիրազ, և ներքինին առանց հակառակութեան մտաւ Ասպահան: Նիմի էլ պարտաւորեցանք խոստանալ հաւատարմութեամբ ճառայել ներքինոյն և նրան մեղ զլուխ և հրամանատու Ճանաչել:

Ներքինի աղայ Մահամատ խանը բազգաւորագոյն զտաւ միւս իւր ժամանակակից բռնաւորներէն: Աս Պարսկաստանի մին անցայտ անկիւնիցը դուրս զարով՝ շատ եղբայրներ և ազդականներ և ժողովուրդ (էլ) ունենալով՝ նոցա վող, իշխանութիւն պարզելով, ուղարկեց ցրուեց

տերութեան առևնայն կողմանքը, որ զնան խաղաղութիւն և արդարագատութիւն քարոզեն և իւր զրօշակի տակը ժողովնեն։ Եւ որպէս թէ արգելեց խստութեամբ՝ քաղաքաց և զիւղօրէից անպարտ բնակչացը անիրաւութիւն չանել, ընդհակառակն, ով ոք ընդդիմանայ և չուզէ հնազանդիլ իւր զրօշակին, սաստիկ պատմեն նրան։ Ինքն և իւր երեսփախաններն կարծ միջոցումը անհնազանդելոցը սպանութեամբ, ընչից յափշտակութեամբ, աչք հանելով և ամենայն դառն հնարքներով հնազանդացրին նրա զրօշակին։ Ասսեա թէ Պարսկաստունը նեղացած, վշտացած և անկարողացած էնքան տարուայ շփոթութիւնից, և զրկուած երևելի մարդկանցից և զօրավարներից և զօրքից, յուսահատութիւնիցը, համաձայնեցաւ միաբերան մտնել մին Պաջարի հրամանի տակը և ձանաչել նրան կիսաթագաւոր։

Ատրպատականը, որ գեռ ևս լաւ չէր ձնաչած նրա հեղինակութիւնը, իւր եղբայր Առւլէյման խանին՝ Արդարի վերտառութեամբ ուղարկեց ծանր զօրքով, հնազանդեցնել էնտեղանքի ինքնազլուխ եղողներին։ ինձ ևս վիճակեցաւ սրա բանակումը հինգ հարիւր ձիաւորի զիսաւոր լինիլ և զնալ Ատրպատական։ Ես իմ հեծելազօրացս հետը միշտ մին կամ երկու օթեան յառաջնութաց կլինեի՛ յետագայ զօրաց համար օթեաններ, պաշարներ պատրաստելոց համար։ Հատ տեղ զիւղացիք լսելով մեր գալուստը, ահու կցրուեին, ևս մեք ել պարտաւոր էինք հասնել նրանց բռնութեամբ վերագարձնել իւրեանց տեղերը. — ասում եմ բըռնութեամբ, կարելի է իմանում ևս ակա-

մայ, ոչ, շատ անգամ՝ արիւնչեղութիւններ կլիներ մինչեւ նրանց կվերադարձնենք։ Եթէ սկսեմ որգեակ, էն արդարութիւն քարոզող զօրավարի, նրա ուսուազրելոց և կամ մեր անիրաւութիւնները ստորագրել քեզ, շատ օրեր է հարկաւոր, զաս, նատիս մօտս լուռ մունջ ականջ զնես՝ մազերդ փշաքաղուելով լսես։ Ինչ և իցէ, հասանք Թավրէզ, ուր քաղաքից զուրս վրանի տակը բանակը իջաւ, որովհետեւ էն երեւելի քաղաքը սկիզբը չըր ուղում ներքինոց գերապահ իշխանութիւնը ձնանաչըր։

Առւլէյման խանը, որ պակաս հնարագէտ և խորամանկ չէր քան թէ իւր հօրեղբայրը, հրատարակեց թէ ևս չեմ եկած մեծամեծաց. և հրամանատուաց փոփոխել, այլ թէ միայն նրանց հնազանդութեան զիրը ստանալ ու վերապառնալ Շահի մօտը։ Որքան սպասաւորներ էր բերած Պարսկաստանէն, ամենին հեռացրեց իրան զլխիցը, և Ատրպատականցի Թառէքերիցը բերաւ հաւաքեց մօտը։ Վանի մի օրից յետը էն Թառլք սպասաւորներով զնաց հոգեւորականաց այցելութիւն և յետոյ Թավրէզու տիրապետողին և երեւելի մարդկանց։ Տիրապետողը տեսնելով նրա զիջանումը, ստիպուած համեցէք արաւ բերաւ իւր տանը իջացրեց։ Վանի մի շաբաթ անցկացաւ՝ Արդարը իւր խոսամանց վրայ մնալով, կրկին յայսնեց թէ պէտք է շըջակայ քաղաքներիցը հընազանդութեան թուղթ ստանայ շուտով ուղարկէ հօրեղբօրը կամ իւր հետը տանէ։ Ասպա թէ ոչ պարտաւորվում է ուժով պահանջել։

Արդարը Թավրվէզու երեւելեացը ժողովելով տիրապետողի տանը, էն մասին խոր-

հուրդ աեսաւ նոցա հետ, և յետոյ վը ճռուեցաւ նշանակէ երեսփոխաններ ուղարկէ Խոյ, Որմի, Նախիջեան, Երևան, Թիֆլիզ, Վարարտաղ, Գեղանջայ, Նուխի, Շամախի, Շագու, Գարբանդ և լն, և լն, որպէս զի նրանցից պատանդ, զօքք, հարկ և զրաւորական հնազանդութիւն պահանջնեն, ապա թէ ոչ՝ կապարտաւորվի պատրաստի Թարպիկու մօտը բնակված զօքքը ուղարկէլ և անհնազանդին զըսպէլ։ Ասիսկեց Թարպիկու մեծամեծացն, որպէս զի և նոքա ևս յորդորանք զրեն երեսփոխանների հետը էն քաղաքների տիրապետողներին։ Չմոռանանք յիշել կըրկին, որ էս ամենայն քաղաքները տասը քսան տարի էր մին մին ինքնիշխան տիրապետող Խան անուամբ ունեին, որք Աստվագեայ թագաւորների ժամանակը՝ տարին մին անգամ միայն պարզեներ կըրկէին Շահերին Սապահան, ու իւրեանց տեղը նատած ինքնազուխ կիշխեին, վասն որոյ և շատ քիչ Շահերի հեղինակութիւնները կծանաչէին։ Եւ հիմի, որ քանի մի տարի էր, Պարսկաստունը օրինաւոր տէր չուներ, նոքա ևս մոռացած էին իւրեանց կամ իւրեանց նախորդների պարտականութիւնները, մանաւանդ էնողէս նորելուկ մի մարդոյ շահ ձանաչելը՝ լաւ զիտէր Ասրդարը, զժուար էր երեալոյ նրանց երեակայութեան մէջը, թերեւս անկարելի իւրեան նպատակը նոցա հասկացնել, վասն որոյ և ջոկեց իւր ստորազրելոց մէջը նոցա, որք արդիւնաւոր կարող էին ընիւ իւր շանկացած նպատակին։

Ասրդարը նշանակեց ինձ չորս տիրապետողի մօտը գնալ այս ինքն Խոյ՝ Հիւսէյին Խան Դիւմբուլի, Նախիջեան՝ Քեալը Ա-

լի խան Գեւանքեարլուի, Երեան՝ Մամադինի և Թիֆլիզ Հերակլ Վալիի մօտ Մին շարաթումը հաղիւ կարողացայ պաշտօնիս արժանաւոր փառքի ու շքեղութեան պարտղայքը պատրաստել և ձանապարհ ընկնել։

Հետո Խոյ քաղաքին երկու փարսախաչավի մօտեցայ, Հիւսէյին խանը շատ ձիւորներով ընդ յառաջ եկաւ ինձ, և տարաւ իւր տանը իջացրուց։ Միւս օրը մեծ պարզեներ հնազանդութեան զրովը զրկեց Թարպիկու։ Ես ևս հինգ օր յարգանաց ընդունելութեանց յետոյ, գնացի դէպ ի Նախիջեան։ Զորսի և Մայրականի և Գեղարգեարի ճանապարհով։ Երբ Մայրական հասայ, Նախիջեանի խանիցը հիւրընկալ ուղարկուածները սպասում էին էն տեղ ինձ։ Ոոքա խորհուրդ տեսան Գարա-Շամբի ճանապարհովը զնալ ուր ասեցին (Կանը փիղամբարի) Ստեփանոս նախավիսյի վանքն է, Հայոց ձեռքումը, արժանի տեսնելոյ, էն տեղ մի օր կը մնանք, և էն տեղաց միւս օրը կերթանք Նախիջեան։ Խոկ միւսները, որք հետս էին եկած, ասեցին էդ ճանապարհները շատ գժուար քարքարոս է, թէև Գեղարգեարու ճանապարհը մին օր հեռի է՝ բայց հանգարտ է։ Ես ևս վերջնոց ասածիննայելով, Գեղարգեարով զնացինք։

Օր ըստ օրէ որքան փառքս պատիւս աւելանում էր և տատիճանս բարձրանում Մահմետականաց մէջը, այնքան էլ խորճմանքս ինձ նեղացնում էր, երբ նայում էի տեսնում Պարսից բարբարոս դործքերը ընդդէմ Սատուածային և մարզկային օրինաց, և իմ ստիպուած նրանց հետեւիլը և մասնակից լինելը։ Տարի ու կէս էր

համարեա, որ քնած և թմրած հոգիս զարթած էր, և փոքր փոքր մտքիս էի բերում քրիստոնէական բարոյականութեամբ սնունդա և ծնողացս խրաները. և թէ որդի, զաւակ, կին, հայր, մայր չունիմ, ինչի՞ պէտք է ես էսքան անիրաւութիւններ անեմ ակամայ, և էն էլ ում համար, այլակրօն տէրութեան համար, որոց մասին անվարձ պէտք է մնամ էս աշխարհ-քումը և երկնքումը, կամ աշխարհքիս անհաստատ փառքի համար, որոց անցողականութեանը և ոչնչութեանը ականատես էի փոքր ժամանակուան մէջն այնքան երեելի և փառասէր զօրավարաց կամ լաւ ևս ասած Շահների պլիսին եկածներին: Վեծ խղճահարութիւնս էլ էն էր, որ ես ներքուստ ոչ կատարեալ քրիստոնեայ և ոչ կատարեալ մահմետական էի, սիրոս, հոգիս մին մարդոյ հետը չէր կապվում, ոգուն խորհուրդոց, ցաւս յայտնէի, որպէս զի նրանով զոնէ մին թեթեռութիւն ստանար խղճմտանքս: Աւելի քան զիս կամ աշխարհումն քամբաղդ մարդ: Ալ մտածէի, առ այժմ համբերեմ, կարելի է մին օր ձակատազիրս ինձ ձզէ Հայաստան հաւատակիցներիս մօտը, էն ժամանակը կկատարվի հոգւոյս ցանկութիւնը. միւս կողմէն ամենայն օր մահն էի նկարազրում առքիս առջելը, ըստ որում զօրական, միշտ վտանգաւոր պատերազմների մէջն էի: Թարմիկ եղած ժամանակը մտքիս էր զարժաւ, յանկարծ ծպտեալ մին օր վեր կենամ փախչեմ զնամ հայրենիքս, որ հիմի շատ հեռի չէ, ազգականներիս — որք որպէս լած էի՝ երեելի և հարուստ էին — յայտնեմ թէ եկած եմ միայն քրիստոնէութիւնս կատարելոյ համար, թողած եմ

փառքս պատիւս մահմետականաց մէջը, և ցանկացած եմ վերադառնալ մայրենի և կեղեցւոյս ծոցը: Միւս կողմէն նայում էի, որ յիսուն փաթսուն տարի է պատփիս դուրս դալը, զարմանք չէ, նրա անունը անզամ մոռացած ընթին և ես մնամ էն տեղ երերեալ և թափառական, երեսիս էլ չնայն: Էսպէս տատանեալ և յուստհատութեան ծովի ալեաց մէջը ընկղմած կայի, մինչ նշանակից Աարդարը ինձ գնալ էն տեղրանքը, որոց շատ ժամանակէ, ի վեր հոգւով ցանկանում էի տեսնել: Ակիզը աներեւութաբար շատ շատ ուրախ էի և մտքումն հաստատ դրի, որ էն տեղրանքը հասածիս պէս՝ ցոյց կտամ Հայ և Հայի արիւնից լինելս, ի հարկէ նրանք այս ինքըն ազգականներս կզարմանան իմ էս պատուիս և փառաքիս տէր լինելուս վերայ, մինչ էս օրուան օրը էն տեղրանքը չը կայ մինը ինձ նման Հայ ազգից: Ի հարկէ, մինչեւ Թարմիկ — ինչպէս լսած էի ծընողներից՝ շատ վանքեր, զարդարած ջահերով, եկեղեցիք լաստերներով և ձրադներով ձանապարհիս վրայ և քաղաքներումը տեսնելոց եմ, մտածում էի, կմրտնեմ նոցա մէջը կտեսնեմ հոգեորականները զարդարուած շուրջառներով թազերով, երկրագութիւն կտամ, խաչ կհանեմ երեսիս, ծունը կդնեմ, ջերմեռանդութեամբ ազօթքներ կանեմ, և այլ էսպիսի երեակայութիւններով երազում էի մտքումը: Վւ թէ, եթէ Պարսիկները լսեն, իմանան, զարմացք չէ՝ որ ինչպէս կրօնամոլ ներով կերպն ինձ սպաննել տալ և կամ աստիճանս — պատիւս ձեռքիցս առնել, յայտնի կասեմ, զուք իմ ծառայութեանս և հաւատարմութեանս նայեցէք, հաւատիս ներ-

քին համոզմանս հետ ի՞նչ բան ունիք։ Յայտնի է, որ վերջին փառաս, որն որ ինձ ու ինձ յառաջ էի բերում, հիմի լաւ հասկանում եմ։ Հիմի . . . որ հաւատիս անհաստատութենին էր, որովհետեւ մինչ նայում էի, հինգ հարիւր ձիաւորի զինաւոր եմ, քանի քանի՛ անզամ պատերազմների մէջ մտած, վիրաւորուած մինչեւ ի մահ, մտածում էի հաղիւ իմ ևս տատիճաննը ձեռք եմ բերած, և այժմ՝ սրանք ի՞նչպէս թողնեմ, և մանաւանդ նոր յանձնարարութիւնը խոստանում էր ինձ աւելի ևս փառաց տէր լինելը ապագայ կեանքիս ընթացքի մէջը։ Աւ էսպէս, որդի, աշխարհ՛քս, էս խարերայ աշխարհ՛քս ինձ խաղալիք էր արել իւրեան խարերայ փառքովը, երբեմն միաքս ու երեակայութիւնս այս, երբեմն այն կողմը ըրջմիջելով ինչպէս Մասիս սարի զլսի մընոլորտը քամու առաջներ։ Արքան մօտենում էի Հայաստանին, էնքան կարծիքներս այլայլվում էին և սիրտս առոչում էր նրանից։ Որոյ ապացոյն էր էն, ինչպէս պատմեցի, երբ Աստիավիայ վանքի անունը յիշեցին, մին օրուան ձանապարհի վատութեան և իմ ու զրաստիս նեղութեան համար՝ ըստ համաձայնեցայ զնալ էն վանքը, — որոյ մասին մահմետականք՝ ինքեանք զարմանալով էին խօսում, — և տեսնել և երկրրոպագութիւն տալ էն հրաշալի եկեղեցոյ պահապանին, որոյ անուանը իմ պապերս, որպէս լած էի ծնողներիցս, առանձին եկեղեցի էին շինած Խիմիլեղ իւրեանց տանը կից և ընծայած նրան։

Միայնակեացը էս տեղ, երբ վերջացրեց խօսելը, զլուխը խոնարհացրեց և տառը բոպէաչափ մնաց լուռ ու մունջ։ Օ, զա-

ցի, որ Էլ ախորժանք չունի խօսելոյ, վերկացայ մնաս բարե ասի դուրս եկի։ Հասայ վանքը ուր ինձ սպասում էին ձաշելոյ։ Պաք օր էր և զանազան խոտեղէնից պատրաստած կերակուրներէն կերանք, զրնացի մտայ խուցս՝ նստեցայ մատիտով զրբած միայնակեցի պատմածները օրինակել։

Եմայոյա 26 ին, օրիցը մին ժամ անցած կլիներ՝ զիմեցի դէպ ի քարանցաւը։ Միայնակեցին զտի քարանցաւէն դուրսը մին քարափի ստուերի տակին նստած, որպէս թէ ինձ էր սպասում։ Բարե տալուս և ողջոյն առնելուց յետոյ՝ նստեցայ։ Միայնակեցը ժպտալով վեր առաւ, երեկուան ընծայքը մոռացար տանելոյ, այսօր եկած ևս տանել։ Աւ հայր, պատասխանեցի, շեի մոռացած, այլ զիտութեամբ թողի և զնացի, նրանք քեզ ուխտած էի, թէ չընդուղնես՝ զէն ածա, կտրտէ, միանդամայն աստծ՝ էնզունք տանողը չեմ։ Այս ասելիս, հանեցի ծոցից քանի մի թերթ զրածները։ Աւսց էնզունք տեսաւ, մին վախեցած մարդու կերպարանքով առեց, հը, էտունք ի՞նչ է, փոքր փոքր ես ուզում ինձ համոզել — բաներ ընդունելոյ համաձայնացնել։

Աւ, ոչ, պատասխանեցի, ծմարիտն ասեմ, քոյ ինձ պատմածները զրած եմ, և հիմի բերած եմ որպէս զի մօտղ կարդամ, ու տեսնես չեմ սիսալուած արդեօք, և ինդրեմ լսիս, որտեղ զանազանութիւններ կայ՝ ասես, ամենն ուղղեմ։

Միայնակեացը էստուր վրայ խոժուաչքերով նայեցաւ, վեր առաւ . ի՞նչ . . . ի՞նչ, զրելը ի՞նչ ասել է, ի՞նչ օգուտ ունիս էդ անցքէն, որ զրում ես և նպատակդ ի՞նչ է։

Հաւատացիք հայր՝ ասեցի՝ երեկն, որ
ոչ ինչ օգուտ քաղել չեմ զրած մաքու-
մրս, և զիտեմ, զիտեմ ինչ է քոյ ասու-
թիւնը, չկարծես թէ իմ զբելյոյ նպա-
տակն է քեզ գովեմ և կամ թէ քոյ ա-
նունը սրբացնեմ . . . քաւ լիցի . . ա-
սենք կամենամ, միթէ ինձանով է էդ. —
իմ նպատակն էն է, որ պատմութիւնները
և ազգային անցքերը, որ գու ես պատ-
մում՝ ինչպէս ականատես, թաղուած չը
մնան յաւիտենական մոռացութեան մէջը:
Եթէ չես հաւատում ինձ, փոքր ինչ
համբերէ կարգամ, լսէ տես, Ճշմարիտ չէ
ասածս արգեօք, յետոյ նեղացիք:

Փոքր ինչ մեղմացաւ միայնակեացը, և
բոպէաչափ լոռութենից յետոյ ասեց, դէ-
մկսէ կարդալ՝ տեսնենք:

Ես շարունակեցի կարգալը: Ըստ տեղ-
րանք, որ ես սխալած էի և կամ զանցա-
ռութեամբ անցկացած, նա կրինեց պատ-
մելը և ես ուղղեցի: Երբ վերջացաւ, խնդ-
րեցի ասել իւր կարծիքը հիմի թէ ինչ
մոռօք է զրած: Ակատեցի քանի մի ըսպէ՝
ոչնչ պատասխան չտուեց ինձ, ես ևս
ինպրեցի շարունակել երեկուանից մնա-
ցածը:

Մտիս է, վեր առաւ միայնակեացը, ե-
րեկուան պատմածս, թողինք Մայրական
պիւղումը կարծեմ:

Հրամերես, էնտեղ մնացինք, պատա-
խանեցի:

Ի՞նչ, սկսեց միայնակեացը, — Մայրա-
կանիցը դուրս եկանք մօտ երեք հարիւր
ձիաւորով և որբան զնում էինք՝ Էնքան
շրջակայ զիւղերիցը շատանում էին նը-
րանք: Երբորդ օրը հասնք Արագի ափը,
ուստից երեւում էր զետի միւս կողմումը

մին զիւղ: Էնտեղաց բերին մեզ համա-
երեք նաւակ, որոնց մինը ինձ համար էր
պատրաստած, զարդարած ճոթեղինոք:
Էնց մտայ նաւակը քանի մի երեկեղեղ,
որը եկած էին Կախիջեանու ինձ ընդ յա-
ռաջ, նաւաստեաց խօսակցութենէն իմա-
ցայ որ սոքա Հայք են: Ըստ զարմանա-
լով, չկարողացայ համբերել, հարցրի-
իբր թէ չեմ հասկանում նոցա խօսքը և
կամ չեմ ճանաչում նոցա կերպարանքէն
ինչ ազգէն լինելը, — սրանք ի՞նչ ազգից
են և ի՞նչ լեզուաւ են խօսում: Ո՞ինը
որ մօտս կանզնած էր, Հայք են պատա-
խանեց: Ո՞իթէ, կրինեցի, մաշմետականք
չկան էս տեղ, որ էս երեկէ և հարկաւոր
ծառայութիւնը յանձնուած է Հայոց:
Ըստ որում, վերապատասխանեց նա, էս
մօտիներումն մաշմետականաց զիւղեր չը-
կան, և թէ խկզքաննէ անտի տեսնուած
է նաւակը Հայոց ձեռքին, և իւրեանք էլ
տեղեակ են էս արշեատին, մաշմետական
բերելը նոր ի նորոյ սովորցնելոյ գժուար է:

Ի՞նչ զիւղացիք են ընդմիջեցի ես: — Գու-
ղացիք են, ասեց նա: Ի՞նչ, — Գուղացի-
ցից հարցրի, Վսպահանից են զալսն, ի՞նչ
ես ասում: — Ոչ պատասխանեց նա, էս զե-
ղի անունը Հին - Գուղայ է և Վսպահա-
նունը՝ Կոր - Գուղայ, նըանք էլ էս տե-
ղաց են զաղմուած, և աշա էն զերեզմա-
նատունը — մատնով ցոյց տուեց — որնը
բանցից է մնացած:

Ո՞ինչ ես շուռ եկայ ձախ կողմիս ան-
յագ նայիլ, — արդարեւ զարմանալի էր
նրա ցեց ցեց զերեզմանաքարերն և կո-
ժողները, — որ թէ յառաջ տեսած լի-
նէի, կարելի է զօրք կարծեի և վախենայի
ևս մտնել նաւակը Վրազն անցանիլ:

Մինչ այս մինչ այն՝ և ահա զգացրին ինձ թէ հասած ենք զետի միւս ափը, ուր Հին Քուղին էր: Ես տեղ Քեալը Ելի խանի աւագ որդին մեզ սպասում էր շատ ձիաւորներով, որ յարգութեամբ ընդուներով՝ տարաւ մեզ մեծ վրանների մեջը, որ մեզ համար պատրաստուած էին:

Սառմ եմ ասում, լսում էի վրանի տակիցը մինչև կէս զիշեր ձիաւորների աղաղակը, բղաւիլը, Հայերին ծեծելը, մինչև անզամ վիրաւորելց ձէնը, ինչի՞ համար՝ զարւոյ խոտի և ուտելեաց համար. — լաւ զիտէի, որքան մահմետականաց զիւղումը առնում էին՝ Էստեղ կրկին են պահանջում: Լաւ զիտէի ուղղափառ մուսուլմանները, Հայերի հացը, մորթած միսը, իւղը չեն ուտել, վասն որոյ և պարտաւորում էին Հայերին մին լիտը մօի տեղը՝ մին ոչխար տալ. նոյնպէս կրկնապատիկրինձը, հաւը, ալիւրը, ձօւն, իւղը, և կամ թէ նոյա գինը՝ իւրեանց ասած զնովը, որ նոյնպէս թանգ էր նստելց: Երանի թէ սրանցով բաւականանացին, որոց զինը յայտնի էր ամենից, կամ թէ գեղերումը հասարակօրէն ինչ կգտնվի՝ կն ուզին. ոչ, ոչ, Էնպիսի ուտելիքներ էին պահանջում, որք շատ քաղաքներում էլ երեմն հաղիւ կգտնուէին:

Ի հարկէ հիւրընկալներս աշխատում էին ամենայն անզամ կարելի և անկարելի հնարք զործ զնել, միայն թէ բաւականութիւն տան ինձ և ծառայից և վաթսընաւասփի ձիաւորիս և կամ ով որ մօտիկ տեղւանքից աւելացած էին ինձ հետ զալու, որպէս զի զանզատը ինձ չհամնի, և էս ուժով չեր կարելի ընել, եթէ ոչ Հայերին նեղութիւն տալով: Քանի մի պար-

սիկ ծառայից լըբութիւնը էն աստիճանը հասաւ, որ Հայոց աղմուկը բարձրացաւ և իմ համբերութիւնը հատնելուց յետը հարցրի, ի՞նչ է, էս ձայնը և աղաղակը: Իանն էլ չկարողացան ծածկել: Քեալը Ելի խանի ծառայքը երբ իմ իմանալը հասկացան, և ես աւելի զօրացրին Հայերին նեղացնելը, մինչև հիմի խփում էին Հայերի ուսերուն, զլաերնուն, ձեռքերնուն, այնուհետեւ կալսիկայ զործ զրին: Մին էլ աեսնեմ վրանիս առաջին քանի մի աւեղարդ Հայ ծերունիք՝ ահով ու դողով ներկայացան. Խան, խնդրեմք ողորմիլ մեզ, աղաղակիցին ու գանգատեցին սպասաւորների ձեռքիցը: Միթէ ես և մօսա նստած բազմականները չէնք իմանում, իրաւունքը Հայոց կողմն է: Բայց . . . բայց (էս տեղ միայնակիցի աչքերը լցուցաւ արտասունքով) փոխանակ ողորմելի Հայերին խնայելց և խղճալց և ճշմարտութիւնը պահպանելց, դառն երեսօք ու զայրացմանը զոչեցի, սպասաւորներ, էս ծերունի Հայերի երեսին եմ ասում ձեզ թէ ուղաձնելնիդ սրանք չտան, տախս եմ ձեզ իրաւունք՝ ողջ զիւղը յափշտակել, երել, վեր ի վայր կործանել: Մտածեցի թէ ես էսպէս սաստիկ չհրամայեմ սկզբանը՝ որ Կախիջեանու հողն եմ մոտած, թոյլ ոմն կկարծեն ինձ, և այսուհետեւ ոչ ոք չը վախել ինձանէ, և ինձ յանձնած զործքը չեմ կարող կատարել: Ես մին քաղաքականութիւն էր Պարսից, եթէ թագաւորի կամ իշխանաւորի կողմից մինը մին նահանգ մտնելին՝ նրա բնակիչքը ի սկզբանը թոյլ մարդ զտան, այնուհետեւնորա խօսքըն ազդութիւն չի ունենալ: Տարաքաղցութեամբ առաջի զիւղը՝ Հայոց զիւղը

պատահեցաւ։ Տես որդին տես, ինչ տեղ
էի զօրութիւնս՝ իշխանութիւնս փորձում։
Հայոց մէջը, որք ոտնի տակը մնացած էս
խառնրվնիթոր ժամանակումը՝ պարաւոր
էին կատարիլ անիբաւ։ որքան և լիներ՝
հրամանս։ Երգարե եթէ ողջ զիւզը երել
էի տուել, ողորմելիքը աեղ չունեին ին-
ձանէ, դանգասելոյ։

Միւս օրը առաւօտեան սուբբ Նախա-
վկայի վանից զլիսաւոր վարդապետներէն
մինը քանի մի ոչխարով և ողջ ողջ կա-
քաւներով ներկայացաւ ինձ հրաւիրել
ասնել վանքը աեսանելոյ համար։ Առվո-
րութիւն է եղած նրանց՝ ամենայն երևելի
անցկացողաց հրաւիրելը։ Առ հիմի շատ
ցանկացայ զնալը, բայց որովհետեւ Նա-
խիջևան ամենայն պատրաստութիւնները
տեսնուած էր ինձ ընդունելոյ համար, նր-
մանապէս և մարդ էր եկած և լուր բերած՝
օր և ժամանակ նշանակած, վասն որոյ նե-
րումն խնդրեցի վարդապետէն և խստա-
ցայ՝ վերապառնալա կատարել նորա խրն-
զիրքը։

(Շաբաթական)

ԳԱԼՈՒԾ ՃԻՐՄԱՀԱՆԱԿՈՒՅ.

ԲԱՐՈՅԵԱԿԱՆ

ԽԲԱՒՈԽՆՔ ՀՈՏՍՈՒՈԽԹԵԱՆ.

Դաստիարակական Աշխատանք Աշխատանք Աշխատանք

զի հողմոյ ընթացքը փոխուելուն պէս՝ մեր
խեղճ մարզն ալ իւր տեղը փոխելով՝ ըր-
նակարանը հարուստ զրացւոյ կողմէն փր-
չած հողմոյն հանդէպը կղեւեղելու։ Եյ-
պէս յածախ կրկնուած տեղափոխութիւնը
վերջապէս զայրացուց վաճառականը, որ
կանչել տուաւ թշուառականին և հար-
ցուց հիւղին շարունակ աեղափոխութեան
սրատձառը։

— «Տեղափոխութեանս պատճառը, պա-
տասխանեց աղքատ մարզը, ուրիշ բան
չէ, բայց եթէ խոհանոցէդ բուրած հոտե-
րուն անչափ անուշութիւնը, վասն զի ես՝
որ խիստ քիչ կուտեմ, մտածեցի թէ այդ
իմ սակառախորտիկ կեզակուրը կարող
եմ համեմել բնակարանէդ դուրս ելած ա-
խորժահամ՝ զորոշիներով»։

— «Ուրիմն, կրկնեց հարուսար, զո-
կերպով մի իմ ծախքով ցարդ ապրած ես
և ինձ պարտական եղած ես։ պարտքդ պի-
տի հատուցանես, ապա թէ ոչ՝ օրինաց
կրողոքեմ, որ զքեզ կդատապարտէ ինձ
զերի լինելու։

Խեղճ սովալլուկը ծիծաղեցաւ միայն այս
տեսակ սպառնալեաց վերայ, լաւ համո-
զուած լինելով իւր կտրճ խելքովը, որ խո-
հանոցներէն ելած հասն ալ զաշտի ծաղ-
կանց հոտի նման բան մի է, կամ արեւո-
ծառապայթներուն և կամ շնչառութեան
պէս որոնք ամենայն մարդոյ ընդհանուր
ժառանգութեան մէկ մասը կկազմեն։ Աս-
կայն հարուսար այդպէս չը մտածեր-
նա քաշեց իւր զրացին մերձակայց դատա-
ւորին առջել և յայտնեց իւր պահանջը։

Եյս երկրին զատաւորները չեն կա-
րող պարձիւ կատարեալ անշահամիրու-
թեամբ, ասողներ ևս կան, որ կաշտապատի-